Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. Միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 89-3.1-21)

Իրականացնում է միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների, խորհրդակցությունների, բանակցությունների և այլ գործնական միջոցառումների նախապատրաստման հետ կապված աշխատանքները, օտարերկրյա երկրների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ տարվող հանդիպումների արձանագրային աշխատանքները, միջազգային համաժողովներին Հանձնաժողովի աշխատակիցներին գործուղելու համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքները, իրականացնում է օտարերկրյա գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների վերլուծություն՝ Հանձնաժողովի կողմից կիրառելիության առումով, Հանձնաժողովի իրավասություններին առնչվող համապատասխան իրավական ակտերի, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փաստաթղթերի թարգմանությունները, իրականացնում է միջնորդավորված կամ ուղղակի կապը և համագործակցությունը Հայաստանի Հանրապետությունում գտնվող արտասահմանյան դեսպանությունների և այլ դիվանագիտական ներկայացուցիչների, միջազգային կազմակերպությունների հետ.

2. Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

Տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով կամ իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,

քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>>, <<Էներգետիկայի մասին>>, <<Էլեկտրոնային հաղորդակցության մասին>>, <<Իրավական ակտերի մասին>> և <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ռուսերեն (ազատ) և անգլերեն (ազատ) լեզուների տիրապետում.

3. Թափուր պաշտոնի հիմքի վերացման ժամկետը՝

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից նշանակում կատարվելը.

4. Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝

«7» «մարտի» 2019թ

5. Աշխատավարձի չափը՝

Մեկ հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր երեսուներկու (175932) դրամի չափով.

6. Աշխատանքի վայրը, հեռախոսահամարները՝

ք.Երևան, Սարյան 22, հեռ. 52-53-40-108,118

7. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն դիմում, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության

դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին,
մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
անձնագրի, հանրային ծառայության համարանիշի (սոցիալական քարտի) պատճենները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 10^{00}-ից մինչև 12^{30}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝
(Երևան, Սարյան22, հեռ. 52-53-40-108,118):